

ԳԱՆՁԱԿԻ ԳԱԽԱՌ

ՆԻՒԹԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՐԵՐ

Ե. ԼԱՂԱՅԻՆՆԵՐ.

ՊԵՏՐՈՎԵՆ ՀԵՐԵՐԻ ՕՏՑԵՍՈՒԹՅՈՒՆ.

ԳԵՆՁԱԿԻ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ.

Դանձակի գաւառը իւր աշխարհի սահմաններով բաժնու է հին Ուսանայ աշխարհի Զախաշէն ¹⁾, Գարգիսն ²⁾ և Արցախի Փառխա ³⁾ գաւառները. Սրա մէջ է մտնում նաև Զարգիսի Կիլիսիան ⁴⁾ կամ Իգիրմիզորդ մահալը, բայց Թաթիշ գիւղից, Կիլիսիան բերդից և հատկապէս փաներից:

Այս գաւառն էս, ինչպէս աւանդում է Խոր. Վարդաշահ Ա. Արշակունի թագաւորի ժամանակ ենթարկում էր Սիւնական Ասան կուսակալին, բայց յետոյ անցաւ Աղուանից թագաւորութեանը: Եւ հայն շատով հայերը կրկին տիրեցին նրան, ինչպէս ասում է Բիւզանդ. (Ե. 13). (Ապարապետն Մուշեղ) Թաթիշ ի նոցանէ, (այսինքն

¹⁾ Զախաշէն գաւառը կոչւում է նաև Զիխաշէն (Խոր. Ժամանագր. եր. 610), Մովսէս Կաթանկատուացին մի տեղ (եր. 251) կոչում է Զախաշէն, մի տեղ տեղ Արշախաշէն (եր. 255): Ամենից միշտ պէտք է համարել Զախաշէն անունը, որ հասանքէն ծագած պէտք է լինի Սագաթիւն կոչումից, սկիւթական Սագ. չնքի անունով, որ ըստ Սարգսիւնի արշաւանով կայաւասան՝ տիրեց այս գաւառին: Սա բանում է Կուր գետի և Կուրակ աւ. Զամբր գետակների մէջ բնկած երկիրը:

²⁾ Այս գաւառը բնկնում էր Կուրակ և Զամբր գետակների, գաղաւթների և Մասիսան թանաղաթի գաղաթնագործ շարունակութեան մէջ: Սա կոչւում է նաև Գարգիսնայ ձոր. (Մատ. Խոր. 258), Գարգիսանից (Վարդ. Յարմ. յիշ. Բարխուդարեան „Արցախ“, եր. 24).

³⁾ Փառխասի գաւառը, որ կոչւում է նաև Փառնիս (Մատ. Խոր. եր. 608, Մով. Կապ. եր. 278 և 279), Փառխ (Մով. Կապ. եր. 278), բնկնում է Զամբր գետակի միջին ստանդակի և Դեղամայ թանաղաթի գաղաթնագործի շարունակութեան և Զուռն գետակի հարաւ-արեւելեան ստանդակի (Արեւիկ) տիրելի և գաղաւթների մէջ. (Երզն. Արցախ. եր. 24):

⁴⁾ Կիլիսիան կամ Իգիրմիզորդ մահալը բնկնում է Կիւրակ և Ինձաւայ գետերի մէջ:

յԱղուանից) բազում գաւառս զոր հասեալ էր նոցա ի նոցանէն (այսինքն ի նայոց) զՈւտի և զՃափաշէն և զձորն Գարգմանայ, զԿողթ և այլն:

Իտրեմնացու ժամանակ Աղուանները կրկին տիրում են այս գաւառին, բայց Սմբատ ա (892—914) նորից յետ է աւելում, իսկ նրա յաջորդ՝ Աշոտ բ. (915—928), որին շատ սիրելի էր Ուտին, երբեմն պատերազմով, և երբեմն սիրով նուաճուած պահում էր, որովհետև շուտ շուտ ապստամբւում էին ¹⁾։

Թ. գարում այս գաւառն ևս ենթարկում է Բաղաշի արշաւանքին, որ 855 թուին զալիս է Գարգմանացոյ գաւառը, ուր փախել էր Վասակ Սրեակաճը:

Սա ջարդել էր Բաղաշի զօրքերը, փառ էր զլորել նրանց զօրագետին և իւր ձիու ոսկերի տակ կոխաւորելով փախել էր Գարգման ամրոցը՝ Կաթին անունով իշխանի մօտ: Սա թէև սիրով ընդունել էր նրան, բայց յետոյ զաւանակութեամբ կապել էր նրան և ուղարկել Բաղաշին, յուսալով եթէ ոչ պատուի արժանանալ, զոնէ լինթարկուիլ նրա բռնութեան: Բայց հակառակն է պատահում: Բաղան աւելում է բերդը և իշխանին կալանաւորում ²⁾։

Նիշլէս այժմ, այնպէս և հին անցեալում այս գաւառի անձնանշանաւոր քաղաքը եղել է Գանձակը (այժմ Ելիսաւետպոլ)։ Սա գրտնւում է հին Ջափաշէն գաւառով և Մոփէտ Կաղանկատուացու ասելով (Խր. 265), հիմնադրուել է 836 թուին Բաղաշի ամիրայի հրամանով, արաբ Խաղը-Փառզուսի որդու ձեռքով:

Կարճ միջոցից Գանձակը զաւնում է Աղուանից մայրաքաղաք, ուր և փոխադրում է Աղուանից կաթողիկոսարանը ³⁾։

Տասներորդ դարի վերջում Փայտուն ամիրան տիրում է Գանձակին, որի սերնդի ձեռին մնում է նա մինչև 1088 թուականը, երբ պարսից Մելիք շահի հրամանով Բաղան Ամիրան պարսից մի կողմը քանդելով աւելում է այս քաղաքը և իւր կողմից կռտակալ նշանակում ⁴⁾։

Սոյն միջոցներին Գանձակը անցնում է Ջէզզադլինեան հարստութեան երկրորդ հիւղին, որի նախահայր Ջեզզադլին Արուս Սուրը 1072 թուին գնել էր Անի մայրաքաղաքը իւր Մանուգ որդու համար և այնտեղ հիմնել Ջեզզադլինեան հարստութեան առաջին հիւղը ⁵⁾։

1139 թուին ասորիկ երկրաշարժից կործանուել է Գանձակը, չինովթիւնների փլատակների տակ թաղելով բնակիչներին: Այս ժամա-

¹⁾ Ինճ. Սուր. Լին Լայ. 337.

²⁾ Յաճանելէս Կաթ. Խր. 71.

³⁾ Մատթէոս Ուռուպեցի Խր. 278.

⁴⁾ Ինճինճ. Սուր. 311. Յանքեան պատմ. Գ. 13.

⁵⁾ ՕՏՈՒՆ-ԼԵՐԷ ՍԻՅԷ. ՄԵՐՃԱՆԱՆԵՔԻԱ ՃԱՆԱՏԻՄ.

Նախ փոքր Թաղաւոր Դմեաթէն, Դաւթի և Գէորգի հաջորդ, եկել և ապրել է քաղաքի գուները իւր երկիրը ¹⁾։

Դանձաւի մնացել է պարսից Ճիզգաղինեան Հարստութեան ձեռքին մինչև ժԳ զարդ և եղել է նրանց զգլխաւոր, իշխանանիստ քաղաքը, մինչև Յափար սուլթանի ժամանակ, որ իւր երկիրը իւր որդիների մէջ բաժանելով՝ Դանձաւի առել է իւր կրտսեր որդուն։ Սրա ժամանակ պարսիկները շատ փառ են փարուել քրիստոնեաների հետ, մինչև անցած, իբրև նախապինք քրիստոնեութեան, քաղաքի զգլխաւոր գոռն տեսլի տակ գրել են խաչը, որովհետև անցնող-զարմնողը առանկոխ անէ նրան։

Այս միջոցներում փառքները հեազհեաէ մտածեալում են Դանձաւին և Զարաթէ ու Իմանէ ապաստարները (ժԳ զարում) առնում են Դեաւթէից և Զարեքը ²⁾։

1285 թուին թաթարները Մուշանի զաւաթից չարմաւում են Դանձաւի փայ, Բնակիչները սկզբում պաշտպանւում են, բայց երբ թաթարները լանդում են պարսիսը մեքենաներով նրանց չառաւատաւ իրանց ստացուածքը թաքցնում են գետնի տակ, կրակ են տալիս աներին և փախչում։ Թաթարները ներս են խուժում, մնացածներին սրի քաշում, խնայելով միայն երեխաներին՝ ապա պեղում են փառած տեղերը և գտնում թաքցրած անթիւ գանձերը, թալանում և այսպէս թաղներով քաղաքն աւերակ և անաշխ՝ վերադառնում են Մուշան։ Մտալայն կարճ միջոցից Զարմաղան նորից շինում է քաղաքը և մարդկանց վերաբնակեցնում այստեղ ³⁾։

Այնուհետև պատմութիւնը Դանձաւի մասին բւում է մինչև 1579 թուականը, երբ Յամանցոց Յաման փաշան առնում է Դանձաւի հետ և՛ Զարաթերը, Զարեքի գետից մինչև Երասֆուր։ Այս արշաւանքի հետեւանքը լինում է մի ստակալի սով, որ լրացնում է պատերազմի աղէտները ⁴⁾։ Ապա, 1607 թուին, երևում է Զահ-Աբասը, որ առնում է Դանձաւը, կոտորում բոլոր աչաղգիներին, աւերում է հին քաղաքը ⁵⁾ և նրանից փոք ինչ հեռու հիմնադրում նորը, վերակոչելով ⁶⁾ Երրասապատ, ուր և կանգնում է մի գեղեցիկ մզկիթ։

Զահ-Աբաս առնում և կործանում է նաև Զամբորը։

Այնուհետև Դանձաւը կոտաւաւորում է պարսից կողմից իշխանաւորած խաներից։

¹⁾ Այբ. եր. 65. Վարդ. Բարձ. 102.

²⁾ Զամչան Գ. 149.

³⁾ Զամչան. Գ. եր. 206. Ինճիլն. Ստար. 312.

⁴⁾ Զամչան, պատմ. Գ. 581.

⁵⁾ Անդ. Գ. 555.

⁶⁾ Անդան. Տնգազիր Լալայ Մնձայ եր. 86.

1721 թ. լեզգիները Ախուլթախի տաճարոգութեամբ 8000 հոգով յարձակում են Գանձակի վրայ և ժողով քաղաքը, բայց այստեղ քաղաքացիները զանազան փառչելներով յարձակուելով նրանց վրայ՝ կոտորում են ժող 1220 մարդ և մնացածներին փախցնում, Ասկան օրանք գնում են Զամբաղ ապաստանելու, Գանձակի Սգուրդ-խանը հալածում է նրանց, բայց յաջվում և յետ է դառնում Այս յաղթութիւնից քաջաբերում՝ լեզգիները զանազան կողմեր ապաստանութիւններ են սփում և կրկին գալիս Գանձակի վրայ, Այս միջոցին Գանձակեցիները վրաց Վախթանգ Թաղաուրին աջնութեան են կանչում, և երբ նա գալիս առնում է Զամբաղ՝ լեզգիները փախչում են: Վախթանգը Գանձակի ժող բանակ է գնում և ողբալով մի ամիս Այս միջոցում զանձակեցիները ստիպում են Վախթանգին, որ կոտորել տայ Թարաքամաններին, որոնք կռճանից լինելով լեզգիների, հրախրում են նրանց այս երկիրը: Հայց զօրքը տարածւում է ամեն կողմ և կոտորում ու թաղանում ոչ միայն Թարաքամաններին, այլ և հայերին և շատերին Թիֆլիս գերի տանում ¹⁾:

Հաջեա Վախթանգը վերադառնում է Թիֆլիս՝ երբ 1722 թուին լեզգիները նորից յարձակում են Գանձակի վրայ, առնում են քաղաքը, ներքին և պառանքներին կոտորում, իսկ աղջիկներին և ժանուկներին գերի տանում ²⁾:

Դեռ մի ամբողջ առթի էլ յանցած, 1723 թուին օսմանցիների զօրքը ուղլթան Անմզի հրամանով առնում է Գանձակը, ինչովս և երեսնն ու Դափէժը և ահագին աւերածութիւններ գործում:

Բայց կարճ միջոցից Գանձակը նորից անցնում է պարսից մեաքը և խան է կարգւում Սգուրդ-խանը, որին 1740 թուին յաջորդում է որդին, Զահվերդի խանը. սրա երկու օրինաւոր կանանցից մինը, Գիւլ-Գունչէն՝ հայունի էր: Զահվերդի-խանին 1756 թ. յաջորդում է որդին՝ Ջաւադ-խանը: Այս վերջին երկու խաների մասին մենք կը խօսանք Մեղիւթ-Բէկարեանների պատմութեան մէջ:

Մահմադ-շահը Թիֆլիսը աւերելուց յետոյ գալիս է Գանձակ, որտեղից մեծամեծ ապաստանութիւններ է սփում Արցախ, Գուգարաց և Աղուանից երկրները: Բայց երբ նախում և Զամբաղում ապաստանածները ընդգլխաւորում են որս զօրքերին և մինչև՝ անգամ գնասներ հասցնում, Մահմադ-շահը կատաղած հրամայում է ձիերի և ջորիների ռաւերի տակ ձգել և սպանել 600 զեքիները, որոնց Թիֆլիսից բերած գեթիկների միջից գատել էր իբրեւ ներքեւ և ցաւազարներ, և բազմ սրանից, չինել է տալիս մի կրաղանգ ուղղադէմ պատ,

¹⁾ Ետայի կաթողիկոս Աղուանից Հատան-Ջալալեան եր. 30.

²⁾ Զամբաղ պատմ. հայց Գ. 184.

որի մէջ թողնում է 52 ծափ, այնքան նեղ, որ մի մարդու գլուխ հասիս կարող էր անցնել, և այս Երջախի գանաթան գաւառներից բռնած 52 հայ մեղիքներին, որոնց մեղադրում էր, թէ մեռնում են եղել Իրքանի խանին փախչելու, թերում է այս պատի ծառ, գլուխները անցկացնում ծափերի մէջ և եռապատիկ թռիկները ձգելով վերելք, կապում է ամենի ջորիներին և այնքան ծնծել է ապիս ջորիներին՝ որ նրանք քաշքշելով պոկում են մեղիքների գլուխները։ Այս միջոցին յաւում է որ ձիւրաղի բնակիչները և նրանց խանը ապստամբել են, խփոյն գնում է դէպի Թէհրան, որպէս զի նրանց առաջն առնէ։

Սրա հետևանքաց յետոյ Երջախի Իրքանի-խանը, որ Դադասան էր փախել, Վրաց ներափի հետ գաշն կապելով փաթմում է կովկասեան 12000 զօրք և միանալով փրաց զօրքի հետ 1796 թ-ին գալիս է Դանմալի Զաւառ-խանի փրաց, Սա յարողանալով նրանց բնդգիմադրել, մեղիք Մէլլումի հետ ամրանում է բերդում, սակայն գաշնակիցները պաշարում են բերդը և բարգերից մինի փայց ապանում մեղիք Մէլլումին, որ հրամանատար էր, զիստն օրից յետոյ Զաւառ-խանը յաղթանակով հաշտութիւն է խնդրում և ստիպում է փաթմում լեզգիներին վճարել խոտոսացում փարձը և վերադարձնել իւր և մեղիք Մէլլումի ունեցած մի քանի հարիւր Թիֆլիսեցի զերիները։ Բայց պահեց ներսից զերի է տանում Վրաստան Դանմալի բնակիչների մեծ ժամանակը ¹)։

1796 թ-ի զեկտեմբերին սուսները Զուրուփ առաջնորդութեամբ, որի հետ էր և Հայոց Յովսէփ արքեպիսկոպոսը, առնում են Դանմալը, սակայն Կասարինէ կայսրուհին փախնանում է և Աղէքսանդր Ա. յետ է կանչում իւր յաղթական զօրքը։ Տեղական Զաւառ-խանը նորից գլուխ է բարձրացնում, մինչև որ 1804 թ-ին յանուարի 3-ին սուսները Տիֆլիսի սուսնորդութեամբ կրկին առնում են Դանմալը, սպանելով Զաւառ-խանին և նրա կրտսեր որդուն։ Մեղապետ Պալ Միխայլովիչը Եկերեան զննով թաղնում է այստեղ, ինչպէս և և Պալսեցի Դեղաբազմի Յովհաննէս եպիսկոպոսը, ²) որ Թիֆլիսի առաջնորդ էր։

1826 թ-ին, երբ Աբրա Միքայան պաշարել էր Զուլին, Դանմալի թուրքերից պատգամաւորներ զնային և խնդրեցին զալ վերահանգնել Դանմալի խանութիւնը։ Աբրա-Միքայան էլ իւր առաջ օրի Մահմէդ Միքայան, իւր փեսայ Ամիր-խան-սարգարին և Զաւառ-խանի որդի Ալադլու-խանին ուղարկեց որանց խնդիրը կատարելու։ Մրանք առան Դանմալը, աւերեցին Երեւէնդարձի և Աննէն-Ֆէլլից գա-

¹) Դիւան Հայ. պատմ. Գ. 4. էջ. 742—43.

²) Դիւան Հայոց պատմ. Բ. էջ. 174—175.

գութները, որոնցից առաինի բնակիչներէջ շատերը կարգապահ լազա-
տեղ իրենց կեանքը միայն հացերի օգնութեամբ, թաքնուելով նրանց
տներում հէնց Դանձակի մէջ, ¹⁾ իսկ Աննէ Լինկոլնի քաղաքի Թիթ-
լիս, և միայն գոյքերը կորցրին։ Այս միջոցին (սեպտեմբերի 2-ին) հայ
ազգի Մատաթովը 2000 հոգի գորքով, եկաւ գէլպի Ջեպզան և պա-
տանց 10—12 հազար պարտեց գորքերի։ Միւս օրը, Ջամբոր գետակի
մօտ տեղի ունեցաւ մի ահեղ կոխ, և պարսիկները 2000 գիւղի և մեծ
աւար թողնելով պատերազմի զաշուում քաղաքն գէլպի Դանձակ և այս
բերդն էլ անխնամ թողնելով նահանջեցին մինչև Ղարաբաղ։ Ամսի
4-ին Մատաթովը մտաւ Դանձակ, որտեղ նրան ընդ առաջ եկան
տեղացին հայերն ու հայ հոգեւորականութիւնը խաչով ու խաչքիւռով ²⁾։

Այս միջոցին Պասկևիչը Դոփխանեան գորքերի ընդհանուր հրա-
մանաւարի պաշտօնը ստանձնելով իւր գորքերով եկաւ Դանձակ և
սեպ. 13-ին քաղաքի առաջը եղան ընդարձակ զաշուում ճակատամարտ
տունց Արաս-Միքայիլ բազմաթիւ գորքին և յաղթելով փախցրեց գէ-
լպի Թալիքի։ Այս պատերազմի մէջ մեծ գործ կատարեց ինչպէս իշ.
Մատաթովը, այնպէս և հայոց հեծելազունները, Մանուկբեան Գրիգոր
եղիսկեպոսի առաջնորդութեամբ։ Այսպիսով Դանձակը կրկին մտաւ
Ռուսաց տիրապետութեան տակ և Պասկևիչի առաջարկով վերախո-
ջուեց Եկիստեաւոյ, ի պատիւ Եկիստեաւս կայսրուհուն։ Եկեւհեաեւ
սկսեց կամաց կամաց զարգանալ և 1870 թուին զարժաւ համանուն
նահանգի նահանգական քաղաք։

ՀԱՅ ՄԵԼԻԻՏԻԱՆԵՐԻ ԱՅՑԵՐ

Դանձակի գաւառում եղել են Մելիք Տէկլարեան, Մելիք Մնա-
ցադանեան, Մելիք Ջահնապարեան և Մելիք Ռոստոմեան մելիքները։
Սրանցից առաջինը իշխել է Եգիպտոսէ կամ Դուխստան մահալին,
որ նախնի բաժանմամբ ընկնում է Ղարաբաղի խանութեան մէջ։
Այս մելիքութիւնը կազմում էր Խամսայ (հինգ) մելիքութիւն-
ներից միւր, որ սկզբներում բոլորովին անկախ, իսկ վերջերում են-
թարկուած էր Ղարաբաղի խաներին։ Միւս մելիքութիւնները գտնու-
ում էին Դանձակի խանութեան մէջ և գրեթէ շարունակ աւորա-
զրուած են եղել Դանձակի խաներին։ Սրանք այնքան էլ նշանաւոր
չեն եղան։

Տալիսեանք որանցից իւրաքանչիւրի պատմութիւնը.

¹⁾ НОВОЕ КАЗАХСТАНСКОЕ ВОЕНН. Т. III. КНТ I. СТ. 101.

²⁾ Եղեցեան Աննայի հայոց կաթ. հ. II. էր. 261.